COVID - 19

# ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

## ՈՎՔԵՐ ԵՆ ԱԶԱՏՎՈՒՄ ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻՑ, ՈՎՔԵՐ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԿԱՐՈՂԱՆԱՆ ՕԳՏՎԵԼ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԻՑ...

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի կառավարությունը ներկայացրեց հակաճգնաժամային տնտեսական ծրագիրը, որը նախատեսում է ինչպես արտակարգ դրությամբ պայմանավորված սահմանափակումների վերացման, այնպես էլ՝ տնտեսական ու սոցիալական բնույթի միջոցառումների իրականացում:*

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում կառավարության հակաճգնաժամային ծրագրով նախատեսված սահմանափակումների վերացման երկրորդ փուլի շրջանակներում նախատեսված սոցիալական օգնության տրամադրումը: Ստորեւ ներկայացնում ենք քաղաքացիներին տրվելիք սոցիալական օգնության հանձնման կարգը (կառավարական հակաճգնաժամային ծրագրի մանրամասները տես՝ stopcov.ge վեբկայքում):

2020 թվականի մայիսի 1-ից՝ վեց ամսվա ընթացքում, եկամտահարկից կազատվեն ամսական 750 լարի աշխատավարձով այն ֆիզիկական անձինք, ովքեր վարձակալներ են եւ այս 6-ամսվա ընթացքում նրանցից յուրաքանչյուրի աշխատավարձը չի գերազանցել ամսական 1 500 լարին:

Նշված փոխզիջման նպատակը գործատուների ամսական ծախսերի կրճատումն է եւ հնարավորության ընձեռումը՝ պահպանել հնարավորինս շատ աշխատատեղեր եւ աշխատողներին վճարել աշխատավարձերը:

Գործատուն ներառում է բոլոր տեսակի ձեռնարկություններ, այդ թվում՝ ընկերություններ, արտադրամասեր, հասարակական կազմակերպություններ, ինչպես նաեւ այն անհատ ձեռներեցներին, ովքեր աշխատանքի են ընդունել ֆիզիկական անձանց, վարձատրվում են ըստ իրենց կատարած աշխատանքի եւ միեւնույն ժամանակ վճարում եկամտահարկ:

Օգնությունից կարող են օգտվել միայն մասնավոր հատվածում գործունեություն ծավալող կազմակերպությունները, եւ նշված օգնությունը չի վերաբերում պետական հատվածում գործող կազմակերպություններին:

Ինչ վերաբերում է պետական հատվածին, ապա վերոնշյալ սոցիալական օգնությունից օգտվել չեն կարող բոլոր նախարարությունները, պետության կողմից հիմնադրված պետական իրավունքի իրավաբանական անձինք (այդ թվում՝ հանրային դպրոցներ, թատրոններ, համույթներ եւ թանգարաններ) եւ ոչ կոմերցիոն իրավաբանական անձինք, քաղաքային ծառայությունները եւ քաղաքապետարանի կողմից հիմնված լրիվ կամ պետության 50 տոկոսի մասնաբաժնով կառույցները (այդ թվում՝ մանկապարտեզներ, համույթներ, մարզական ակումբներ եւ այլն):

Այն ձեռնարկությունները, որոնք իրավասու են մայիս-հոկտեմբեր ժամանակահատվածում օգտվել օգնությունից, աշխատավարձի վճարման եկամտահարկից, ընդհանրապես չեն վճարի այն աշխատողների համար, որոնց աշխատավարձը կազմում է 750 լարի կամ ավելի քիչ: Մասամբ կվճարեն այն աշխատողների համար, որոնց աշխատավարձը գերազանցում է 750 լարին եւ չի գերազանցում 1 500 լարին: Այդ դեպքում ստացված աշխատավարձից կրճատվում է 750 լարին, իսկ մնացած գումարը հարկվում է եկամտահարկով: Ամբողջությամբ կվճարվի այն աշխատողների համար, որոնց աշխատավարձը, տվյալ ամսվա ընթացքում, կկազմի ավելի քան 1 500 լարի:

1500 լարի աշխատավարձի չափը վերաբերում է տվյալ ամսվա ընթացքում վճարված աշխատավարձին, այսինքն, եթե մայիսին աշխատողին վճարվել է 1 600 լարի, ապա ձեռնարկությունը չի կարողանա օգտվել այդ աշխատողի եկամտահարկից, սակայն, եթե հունիսին նույն աշխատողին տրվել է 1 400 լարի, ապա այդ դեպքում կօգտվի օգնությունից եւ հունիսի եկամտահարկը կվճարի մասամբ, մասնավորապես՝ 1 400 լարիից կհանվի 750 լարին եւ եկամտահարկ կվճարի 650 լարիի համար (130 լարի):

Ձեռնարկությունը եկամտահարկի հայտարարագիրը կներկայացնի սովորական ռեժիմով՝ հաջորդ ամսվա 15-ին:

# ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

*Վրաստանի կառավարության հակաճգնաժամային ծրագրի համաձայն՝ 6 ամսվա ընթացքում, միջինը 600 լարիի (ամսական 100 լարի) օգնություն կստանան.*

1. Ընտանիքները, որոնց ռեյտինգային բալը 65 000-ից 100 000 է կազմում: Ըստ կառավարության հաշվարկների՝ այս ծրագրով օգնություն կստանա 70 000 ընտանիք՝ շուրջ 190 000 քաղաքացի:

2. Ընտանիքները, որոնց ռեյտինգային բալը 0-ից 100 000 է եւ ունեն 3 կամ ավելի՝ մինչեւ 16 տարեկան երեխա: Այս ծրագրից կօգտվի 21 000 ընտանիք:

3. Խիստ արտահայտված սահմանափակ կարողությունների տեր անձինք եւ երեխաներ: Այս ծրագրից կօգտվի 40 000 քաղաքացի:

Երկրի կառավարության հակաճգնաժամային ծրագրի շրջանակներում՝ նախատեսված միջոցառումների հարցով՝ Վրաստանի առողջապահության փոխնախարար Թամար Բարկալաիան ասաց. միայնակ բնակվողները կստանան ամսական 70 լարի, երկու անդամից բաղկացած ընտանիքը կստանա 90 լարի, երեք անդամ ունեցողը՝ 105 լարի, չորս անդամ ունեցողը՝ 140 լարի, հինգ անդամ ունեցողը՝ 175, վեց անդամ ունեցողը՝ 210 եւ յոթ անդամից բաղկացած ընտանիքը ամսական կստանա 245 լարի:

Այս մարդկանց անհրաժեշտ չի լինի ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր, նրանց գումարը կփոխանցվի ստացված սոցիալական օգնության հետ միասին:

# 200-ԱԿԱՆ ԼԱՐԻ՝ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ

Վրաստանի առողջապահության փոխնախարար Թամար Բարկալաիայի խոսքով, վարձու աշխատողները, ովքեր այլեւս չեն վարձատրվում, գտնվում են չվճարված արձակուրդում կամ ազատվել են աշխատանքից, վեց ամսվա ընթացքում կստանան պետությունից ամսական 200 լարի:

- Այս ցուցակները կազմելու է եկամուտների ծառայությունը, որը կներկայացվի մեր զբաղվածության գործակալությանը:

Պաշտոնապես վարձու այն անձինք, ովքեր պաշտոնապես աշխատանքի են ընդունվել, հարկ չի լինի որեւէ լրացուցիչ փաստաթղթեր եւ լրացուցիչ գրանցումներ անել,- ասաց առողջապահության փոխնախարար Թամար Բարկալաիան:

ԿՐԹԱԿԱՆ

# ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԱԲՆԱԿ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

*Ներթափանցելով մեր կյանք Covid -19 -ը փոխեց ու կոտրեց կարծրատիպեր, ստիպեց ապրել իր իսկ թելադրած պայմաններում, ստիպեց արագ կողմնորոշվել ու ապրել նույն ոճով՝ ամբողջ աշխարհում: Փետրվարի 26-ին Վրաստանում հաստատվեց կորոնավիրուսի առաջին դեպքը, մարտի 2-ին, Վրաստանի վարչապետի գլխավորությամբ գործող միջգերատեսչական համակարգող խորհուրդը դադարեցրեց ուսումնական ընթացքը՝ երկրի միջնակարգ ու բարձրագույն հաստատություններում: Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն անմիջապես նախաձեռնեց հեռավար առցանց ուսուցման գործընթացը՝ գործի դնելով տեղեկատվական եւ հեռահաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաները: Համավարակի պայմաններում սա միակ ելքն էր կրթությունն ապահովելու եւ 2019/2020 ուստարվա երկրորդ կիսամյակի հնարավոր երկարաձգումը բացառելու համար: Եվ չնայած նրա, որ աշխարհում ուսուցման առցանց մոդելը կիրառելի էր XX դարի վերջերից, մեր երկրում այն դեռեւս ծանոթ չէր լայն շրջանակներին:*

Հեռավար ուսուցումը Վրաստանում սկսվեց մարտի կեսերից՝ մշակվելով մեկ ամսից քիչ ժամանակահատվածում: Այսօր արդեն Տնտեսական համագործակցության զարգացման միջազգային կազմակերպությունն (OECD) այն որակում է՝ որպես ամենաստացվածն ու լավագույններից մեկն աշխարհում: Դպրոցներում Microsoft ծրագրի առցանց հարթակի Teams հավելվածը, իսկ բուհերում՝ Learning management system (LMS, կրթության ղեկավարման համակարգ) հարթակը եւ Zoom հավելվածը հնարավորություն տվեցին միաժամանակ վիդեո դասեր ձայնագրել, առաջադրանք կատարել, խմբային քննարկումներ անցկացնել: Կրթության հնարավոր լիարժեքությունն ապահովելու ու դիմորդներին աջակցելու նպատակով՝ Վրաստանի կրթության նախարարությունը, Առաջին ալիքի հետ համատեղ, սկսեց հեռարձակել նաեւ Հեռուստադպրոցը, ցանկում ունենալով հայկական դպրոցների համար նախատեսված հեռուստադասեր:

Վրաստանի կրթության նախարար Միխեիլ Չխենկելին արդեն հայտարարել է, որ 2019/20 ուստարին ակադեմիական չի ճանաչվելու եւ ուսումնական գործընթացը կավարտվի առցանց ուսուցմամբ: «Վրաստանը» փորձեց պարզել, թե ինչպե՞ս են կարողանում հաղթահարել դժվարությունները Վրաստանի հայկական դպրոցները, բուհերի ուսանողները, որքա՞ն է հաջողված համարվում Հեռուստադպրոցն ու որո՞նք են առցանց ուսուցման դրական եւ բացասական կողմերը:

***Դեսպինե Քոիավա, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ուսումնական ծրագրի դեպարտամենտի ազգային փոքրամասնությունների լեզվական խմբերի համակարգող.*** - Հեռուստադպրոցի հացեատերերը նրանք են, ում հասանելի չէ համացանցը: Իսկ օնլայն դասընթացներին մասնակից աշակերտության ու դիմորդների համար այն կարող է հավելյալ գիտելիքի աղբյուր հանդիսանալ. Արձագանքները՝ ե'ւ դրական, ե'ւ երբեմն բացասական են: Բայց կարծում եմ, խիստ դատել պետք չէ: Մեր մանկավարժները ոչ թե կենդանի լսարանի, այլ տեսախցիկի առաջ են: Համոզված եմ, որ ժամանակի ընթացքում կաշկանդվածությունը կանցնի ու դասերն ավելի անմիջական կլինեն: Ի դեպ, հավանական է, որ Հեռուստադպրոցը շարունակական դառնա եւ հետհամավարակի պայմաններում նույնպես գործի:

***Թերեզա Չիվչյան, Ախալքալաքիի մունիցիպալիտետի ռեսուրս-կենտրոնի ղեկավար.*** - Ինչպես ամբողջ Վրաստանում, այնպես էլ՝ Ախալքալաքիի շրջանում, դպրոցներում ներդրվել է ուսուցման հեռավար մեթոդը: Նախնական փուլում առկա էին մասնակի դժվարություններ՝ կապված նոր ծրագրերի, համացանցի եւ ռեսուրսների ոչ բավարար քանակի հետ, սակայն, նախարարության եւ ռեսուրս-կենտրոնի հանձնարարականների եւ խորհրդատվության շնորհիվ, այսօր ամբողջ շրջանի դպրոցներում հստակ կազմակերպված է ուսումնական ընթացքը: Դասընթացներն ընթանում են տարբեր ծրագրերի եւ հավելվածների օգնությամբ (Teams, Zoom եւ այլն): Երեխաները սիրով հետեւում են նաեւ Հեռուստադպրոց նախագծին: Լիահույս եմ, որ բոլորս միասին շուտով կհաղթահարենք այս դժվարությունները եւ կվերադառնանք կյանքի նորմալ ռիթմին, իսկ դասընթացները օնլայն հարթակից կվերադառնան դասարաններ:

***Զոյա Մխիթարյան, Թբիլիսիի Իվ.Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի դասախոս.*** - Ժամանակակից հայոց լեզու եւ դասավանդման մեթոդիկա եմ դասավանդում Հոգեբանության եւ մանկավարժության ֆակուլտետի բազմալեզու կրթություն մոդուլի չորս կուրսերում եւ Վրաց լեզվի քերականություն՝ Հումանիտար ֆակուլտետի «1+4» ծրագրի զրո կուրսում: Նախընտրում եմ Zoom ծրագիրը, որը հենց դեկանատի վարչակազմն է երաշխավորել: Նախքան դասընթացներին անցնելը՝ դեկանատը թրեյնինգներ անցկացրեց: Նշանակվեցին հատուկ ժամեր, կազմվեցին առանձին խմբեր եւ, երբ գործի անցանք՝ անհամեմատ հեշտ էր: Ինձ հատկապես ոգեւորում է ուսանողների պարտաճանաչությունն ու պատրաստակամությունը: Բացակա ուսանող գրեթե չկա: Եվ միայն շատ հազվադեպ է լինում, որ ոմանք բացակայում են՝ տեխնիկական խնդիրներով: Բայց պարտադիր գործնական աշխատանքը կատարում եւ ուղարկում են: Համացանցային հնարավորություններից օգտվելու մեջ ազատ ենք՝ միայն թե դասը կայանա: Նույնիսկ շնորհանդեսներ ենք կազմակերպում, երբեմն դասը վարելու հնարավորությունը նրանց եմ տալիս՝ թեման սեփական մեկնաբանությամբ ներկայացնելու համար: Կարգավորված է նաեւ ձեռնարկների ու համապատասխան գրականության խնդիրը: Եթե ուսանողը հնարավորություն չունի օգտվել դասագրքերից, որոնք համալսարանական գրադարանում կամ դեկանատում են, ապա դասախոսը, վարչակազմի աշխատողները դասախոսությունները համարակալում, պատրաստում եւ ներբեռնում են LMS հարթակ, որպեսզի ուանողները հնարավորություն ունենան օգտվել: Միակ դժվարությունը համակարգչի խնդիրն է, ոմանք չունեն կամ սարքին չէ: Հեռախոսով դժվար է միաժամանակ խոսել եւ բացել ֆայլը: Բայց, եթե այս գործընթացը երկարաձգվի, համոզված եմ, համալսարանն այդ հարցը նույնպես կլուծի, քանի որ պարբերաբար հարցումներ է անցկացնում ուսանողների շրջանում, հետաքրքրվելով, թե ինչ դժվարությունների են հանդիպում նրանք: Ամենակարեւորն այս պահին բոլորիս առողջությունն է ու բարեկեցությունը: Դեռ որ մնացեք տանը՝ բաց չթողնելով նորը սովորելու հնարավորությունը:

**Իրինա Ժամկոչյան, Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի տնօրեն.** - Վրաստանի կրթության նախարարությունն արեց ամենը, որպեսզի մանկավարժներին ու աշակերտությանն առաջարկվող հանրակրթական նոր մեթոդը մատչելիություն ձեռքբերեր: Մեր դպրոցը գործում է Microsoft Teams հարթակում: Դժվարություններն առնչվեցին ռեսուրսին եւ հմտություններին: Հարցը խնցելի էր հատկապես բազմազավակ ու սոցիալապես անապահով ընտանիքների պարագայում: Մեր դպրոցում շարունակում են մնալ երեխաներ, որոնք երբեմն չեն միանում հարթակին: Բայց մանկավարժներից բոլորն ընդգրկված են, եւ՝ նույնիսկ մեր ամենատարեց ուսուցչուհին: Փոխաջակցության շնորհիվ՝ այս նոր միջավայրում արագ կողմնորոշվեցինք ու գործի անցանք: Կարծում եմ՝ այս պարագայում մեծ դեր խաղացին սերն ու պատասխանատվությունը երեխաների հանդեպ: Հասկանում եմ՝ տարբերությունը դասարանում եւ համակարգչի դիմաց, ուր ներկայությունն ու խոսքը հաճախ ընդհատվում են կապի պատճառով, մեծ է, բայց մենք շնորհակալ ենք նախարարությանը այս հնարավորության համար:

**Ռուզաննա Տեպոյան, Ախալքալաքիի թիվ 1 հանրային դպրոցի տնօրեն.** - Եթե անկեղծ, ապա ասեմ, որ այս ծրագրի հաջողության գրավականը հաճախ ծնողներն են, նրանց վերահսկողությունն այս պարագայում մեծ նշանակություն ունի: Ուստի, հատկապես արդյունավետ է գործընթացը տարրական դասարաններում: Մեր դպրոցի բոլոր մանկավարժներն ընդգրկված են այս ծրագրում: Եվ նույնիսկ սպորտի դասընթացներ ենք անցկացնում՝ հատուկ թեստերի միջոցով: Որքան էլ բարդ լիներ սկիզբը, հաղթահարեցինք: Դասերի տեւողությունը 20 րոպե է՝ կարճատեւ ընդմիջում-

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ԿՐԹԱԿԱՆ

# ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԱԲՆԱԿ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

(Սկիզբը՝ 5-րդ էջում)

ներով: Երեխաներին հորդորել ենք հետեւել Հեռուստադպրոցին, արձագանքները դրական են: Դպրոցում 451 աշակերտ է ուսանում, ցավում եմ, որ կորոնավիրուսով պայմանավորված այս իրավիճակը հատկապես անդրադարձավ մեր 51 շրջանավարտների եւ նրանց այդքան սպասված «Վերջին զանգին»: Հույս ունեմ, որ ամռանը եւ կամ նոր տարեսկզբին, հենց հնարավոր եւ թույլատրելի լինի՝ հավուր պատշաճի կճանապարհենք նրանց:

***Համլետ Մախտեսյան, Նինոծմինդայի մունիցիպալիտետի Փոքր Խանչալի գյուղի հանրային դպրոցի տնօրեն.*** - Հեռավար ուսուցումն ունի ե'ւ դրական, ե'ւ բացասական կողմեր: Դրականն այն է, որ աշակերտներն իրենց ժամանակն անիմաստ չեն վատնում, միանում են դասերին, ինչ-որ չափով հետ չեն մնում Ազգային ուսումնական պլանից: Մենք դասերն անցկացնում ենք ըստ մինչ այդ գործող դասացուցակի: Բացասական կողմը՝ տեխնիկականն է: Համացանցը թույլ է: Կան աշակերտներ, որոնք համակարգիչ չունեն: Հնարավոր է նաեւ երեխան միանա դասին, բայց ամբողջությամբ չներգրավվի ընթացքին, կողմնակի զբաղմունք գտնի: Նման դեպքերում շատ կարեւոր է ծնողների մասնակցությունը: Ես որպես տնօրեն, փորձում եմ վերահսկել ուսուցիչների աշխատանքը, խնդրել եմ նրանց, որ անցկացրած դասերը լուսանկարեն եւ ուղարկեն ինձ: Ինչ վերաբերում է Հեռուստադպրոցին, ապա շատ հետաքրքիր ծրագիր է, բայց, ցավոք, մեր գյուղում այդ ալիքը ոչ ոք չունի, ու աշակերտները չեն կարող հետեւել դասերին: Ցանկալի կլիներ, որ տեղական հեռուստատեսությունը կապ ունենար Վրաստանի Առաջին ալիքի հետ, եւ ինքն էլ ցուցադրեր դասերը, որպեսզի մենք էլ օգտվեինք այս նախաձեռնությունից:

***Արամ Վարդանյան, Ախալցիխեի մունիցիպալիտետի Ծուղրութ գյուղի հանրային դպրոցի տնօրեն.*** - Դժվարությունները մեկնարկի առաջին շաբաթվա ընթացքում էին, հետո ամեն ինչ հունի մեջ ընկավ: Այս պահին դպրոցում չի դասավանդվում միայն սպորտը, հուսով եմ, այս հարցն էլ կկարգավորենք: Դպրոցում 198 աշակերտ է սովորում եւ վստահ կարող եմ ասել, որ բոլորն էլ ընդգրկված են: Երեխաների մեծ մասն ունի համակարգիչ, մյուսներն օգտվում են հեռախոսներից: Օգտագործում ենք Teams ծրագիրը: Խնդիրները հիմնականում առաջանում են համացանցի պատճառով: Շուտով կմեկնարկի նաեւ առաջին դասարանցիների գրանցումը: Ուրախությամբ նշեմ, որ այս տարի նրանք մեզ մոտ աննախադեպ շատ են՝ 31: Առողջություն բոլորիս ու բարի վերադարձ դպրոց:

***Ազնիվ Ոսկանյան, Ծալկայի մունիցիպալիտետի Ղզլքիլիսա գյուղի հանրային դպրոցի տնօրեն.*** - Մեր դպրոցը շրջանի ամենամեծերից մեկն է, ունենք 153 աշակերտ, որից 10-ը՝ շրջանավարտ: Մեկս մյուսին օգնելով կարողացանք ընդգրկվել Teams ծրագիր, որի միջոցով էլ այսօր անցկացնում ենք մեր հեռավար դասընթացները: Իսկ մինչ այդ օգտվում էինք համացանցի այլ հարթակներից: Շնորհակալությամբ նշեմ, որ շատ ուշադիր է մեր հանդեպ Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը, մենք անընդհատ հարցումներ ենք ստանում՝ ընթացքի, ծագող խնդիրների վերաբերյալ, որոնց կարգավորման հարցում մշտապես աջակցում են: Տնօրեն-մանկավարժ հատուկ խումբ ունենք, որպես տնօրեն փորձում եմ վերահսկել ընթացքը: Նույնիսկ ծնողական ժողովներ ենք կազմակերպում՝ օնլայն տարբերակով: Ցավոք, վրացական հեռուստաալիքներ չունենք՝ Հեռուստադպրոցին հետեւելու համար, բայց փորձում ենք օգտվել ֆեյսբուքյան էջից:

***Հրանուշ Խուբլարյան, Բոլնիսիի մունիցիպալիտետի Բոլնիս-Խաչեն եւ Կիանեթի գյուղերի հանրային դպրոցի տնօրեն.*** - Ինչպես գիտեք, կորոնավիրուսով պայմանավորված Բոլնիսիի մունիցիպալիտետը կարանտինային խիստ գոտում է: Այդուհանդերձ, գյուղում իրավիճակը հանգիստ է, բարեբախտաբար վարակված չունենք: Հեռավար ուսուցման պայմաններում փորձում ենք օգտագործել համացանցի բոլոր հնարավորությունները՝ Viber, Skype, WhatsApp: Չնայած նրա, որ գրանցվել ենք Teams ծրագրում, այդուհանդերձ օգտվում ենք այլ հարթակներից եւս: Բոլնիս-Խաչենի դպրոցում սովորում է 191 աշակերտ: Դասի ավարտին ուղարկվում են լուսանկարներն ու ամփոփ դասերը: Ուրախ ենք, հատկապես, Հեռուստադպրոցի համար, որովհետեւ երեխաները, ինչպես նաեւ ուսուցիչները մեծ հետաքրքրությամբ են այն դիտում:

***Վիոլետա Սուքիասյան, Մառնեուլիի մունիցիպալիտետի Աղքյորփի գյուղի հանրային դպրոցի տնօրեն.*** - Մեկուսացման մեջ հայտնված մեր միակ հույսն ու աշխարհի հետ կապը ապահովում է տեխնիկան: Այսօր արդեն, շատերը խոսում են համավարակով պայմանավորված դրական արդյունքի՝ տեխնիկական հմտությունների ձեռքբերման մասին: Հեռավար ուսուցումը մեր գյուղում փորձում ենք իրականացնել համացանցի տարբեր հարթակների եւ ծրագրերի միջոցով: Բայց կապը թույլ է եւ խափանումները՝ շատ: Այդուհանդերձ, մանկավարժներն անընդհատ կապի մեջ են երեխաների հետ: Հեռուստադպրոցը միայն ֆեյսբուքյան էջով է հնարավոր դիտել, շատ լավ նախաձեռնություն է, եւ հույս ունենք, որ շարունակական է լինելու:

***Ալլա Սիրոմյատովա, Թեթրիծղարոյի մունիցիպալիտետի Սամշվիլդե եւ Դաղեթ-Խաչեն գյուղերի դպրոցի տնօրեն.*** - Աշխարհագրական դիրքից ելնելով, համացանցը մեր գյուղ շատ թույլ հաճախականութամբ է հասնում, ուստի Teams ծրագրին մենք այդպես էլ չկարողացանք միանալ: Եվ սակայն, դա չխանգարեց, որպեսզի հեռավար ուսուցումը նորմալ ընթացք ունենար: Օգտագործում ենք համացանցի այլ հարթակներ, այդ թվում՝ Messenger-ը: Մեր դպրոցում 84 աշակերտ է ուսանում, դասարանում աշակերտների առավելագույն թիվը 11 է: Քչաթիվ դասարաններում հեշտ է պարապել, ուղարկում ենք առաջադրանքները, ապա մեկ առ մեկ ստուգում հետ ուղարկված տարբերակները: Հաճախ խմբայինի փոխարեն, պարապմունքներն անհատական են դառնում: Մի խոսքով, գործադրում ենք հնարավորը: Ինչպես գիտեք, Թեթրիծղարոյի շրջանն այսօր փակ է եւ կորոնավիրուսով պայմանավորված խիստ կարանտինային պայմանակարգ է գործում: Գյուղում վարակված չկա, բնակիչները շատ կարգապահ են՝ պահպանելով բոլոր հանձնարարականները:

*ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ*

ՄԱՐԴԸ ՄԵՐ ՇՐՋԱՊԱՏՈՒՄ

# ԾՆՈՒՆԴԴ ՇՆՈՐՀԱՎՈ՞Ր, ՍԵՅՐԱՆ

*Այս անգամ հեռախոսազանգը Թբիլիսիից էր: «Վրաստանի» խմբագրությունից էր զանգահարողը: Սովորական ջերմ բարեւից հետո գործընկերս հետաքրքրվեց շրջանում տիրող իրավիճակով, բնության մատուցած անակնկալներով: Եվ այնուհետեւ խմբագիրը հաճելի լուր հաղորդեց.*



- Տեղյա՞կ եք, որ մեր լավ ընկերն ու թերթի բարեկամը՝ Սեյրան Կյուրեղյանը, արդեն 70 տարեկան է: Շատերն են շնորհավորում: Սպասում ենք նյութիդ:

- Իհարկե, անպայման, պատասխանեցի:

Առիթը ներկայացավ եւ մեր ընկերոջ հոբելյանը համատեղ շնորհավորելն ու բարեմաղթանքներ հղելը, ինչ խոսք, անչափ հաճելի է:

Սեյրան Կյուրեղյանը շրջանի ու երկրամասի երեւելի դեմքերից է, ճանաչված անձնավորություն, անցել է կյանքի երկար ու արգասաբեր ճանապարհ, վարել բազմաթիվ պատասխանատու պաշտոններ, ճաշակել հաջողությունների բերկրանքն ու դժվարությունների դառնությունը:

Վաղուց, շատ վաղուց է մեր ծանոթությունը Սեյրան Կյուրեղյանի հետ, համարյա 60 տարի: Դա տեղի է ունեցել անցյալ դարի 60-ական թվականներին, երբ ես ուսուցիչ էի աշխատում: Նա սովորում էր 6-րդ դասարանում, իսկ ես տվյալ դասարանի դասղեկն էի: Ուսման գերազանցիկ էր, արդեն փոքրուց աչքի էր ընկնում իր ջանասիրությամբ, ակտիվ մասնակցություն էր ունենում կրթօջախի ու գյուղի հասարակական կյանքին:

Սեյրանի ուսման գործով շատ էր հետաքրքրվում նաեւ հայրը՝ մեծ Հայրենականի մասնակից Հովակիմ Կյուրեղյանը: Նա հաճախ էր գալիս դպրոց՝ հետաքրքրվելով Սեյրանի ուսման գործերով եւ ուրախ էր, որդին հինգեր է ստանում, գերազանցիկ է:

- Այսօր էլի երկու հինգ ստացավ, այնպես որ, հանգիստ գնա տուն,- մի առիթով ասացի Հովակիմին:

Կյանքը ցույց տվեց, որ Սեյրանի ծնողի ցանկությունը աշակերտ Սեյրանի հանդեպ, լրիվությամբ իրականացավ: Նրա զավակը, իրոք, ճանաչված մարդ դարձավ, բազմաթիվ պաշտոններ վարեց, պատիվ ու հարգանք վաստակեց: Այսօր էլ նա շարքում է, դարձյալ աշխատում է պարտքի ու պատասխանատվության մեծ զգացումով: Դպրոցից հետո կյանքի ճանապարհը Սեյրանին տարավ տարբեր բնագավառներ, ընտրեց սրտի ուզած մասնագիտությունը, հետո՝ մեկ ուրիշը, հետո՝ ավելի պատասխանատուն:

Սեյրանը նախ՝ սովորեց Լենինականի (այժմ՝ Գյումրի) բժշկական տեխնիկումում, որն ավարտեց գերազանց առաջադիմությամբ եւ աշխատանքի անցավ հայրենի եզերքում, եղավ Փարվանայի լճափնյա Ասփարա գյուղի բուժկետի վարիչ, հետո՝ տեղափոխվեց Գանձայի հիվանդանոց: Բայց որքան էլ միջավայրը նպաստավոր էր եւ նախապայման էր ստեղծվել ուսումը բժշկական ինստիտուտում շարունակելու համար՝ նրան ձգում էր դպրոցը, մանկավարժությունը: Այդպես էլ եղավ:

1970 թվականին ուսուցիչ աշխատեց հայրենի Փոկայից ոչ հեռու Վլադիմիրովկա գյուղի դպրոցում, ապա, մեկ տարի անց, Սեյրանը մանկավարժի աշխատանքը շարունակեց Փոկայի միջնակարգում:

1975-80 թվականներին հեռակա կարգով ավարտեց Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը՝ որպես հայոց լեզվի եւ գրականության մասնագետ: Բացի մասնագիտական առարկաներից, դասավանդում էր նաեւ ռազմական գործ: Սեյրանի լիդերական հատկությունը արդեն աչքի էր ընկնում եւ նրան միաժամանակ ընտրեցին դպրոցի ուսուցչական կոլեկտիվի կուսկազմակերպության քարտուղար: Այդ ընթացքում էլ նա կուսակցական աշխատանքի մեծ փորձ ձեռք բերեց եւ աչքի ընկավ իր պարտաճանաչ աշխատանքով: Եվ պատահական չէ, որ հետագայում նրան ընտրեցին Փոկայի կոլտնտեսության կուսկազմակերպության ազատ քարտուղար: Նոր միջավայր եւ ավելի պատասխանատու աշխատանք: Հարկավոր էր՝ գյուղի բոլոր աշխատողների ջանքերը նպատակաուղղել կոլտնտեսության առաջընթացին, բարձրացնել հանրային արտադրությունը:

Եվ ահա, 1987-ի մի գեղեցիկ օր, Սեյրան Կյուրեղյանն ընտրվեց տվյալ կոլտնտեսության նախագահ: Ավելի պատասխանատու եւ կարեւոր գործ, որը պահանջում էր ուժերի լարում, համառ ու հետեւողական աշխատանք: Նա էր թիվ առաջին պատասխանատուն տնտեսության վիճակի համար: Այդ մղումով էլ շարունակեց աշխատել: Տնտեսության վերելքն ակնհայտ է: Փոկան թոթափեց տարիների հետամնացությունը, ազատվեց տարիներով կուտակված պարտքերից, դարձավ առաջավոր, անուլ դաշտերը դարձան բերքատու, ֆերմաներում աճեց կաթի ու մյուս մթերքների արտադրությունը: Լուրջ վերափոխումներ կատարվեցին գյուղի կյանքում ու կենցաղում: Հիմնովին վերակառուցվեց ու բարեկարգվեցին ճանապարհները, կառուցվեցին ավտոմատ հեռախոսացանց ու հեռուստաաշտարակ, գյուղի փողոցներում անցկացվեց ցերեկային լուսավորություն, կառուցվեցին նոր անասնաշենքեր, արհեստանոց, շահագործման հանձնվեց մշակույթի տունը:

Կյանքը, ինչպես ասում են, կանգած տեղում չի մնում եւ շարժվում է առաջ: Անցյալ դարի վերջերին, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, հիմնովին փոխվեց տիրող իրավիճակը: Ասպարեզից վերացան ոչ միայն կոլտնտեսությունները... ստեղծվեց աշխատանքի նոր միջավայր: Այդ միջավայրը Սեյրան Կյուրեղյանի համար դարձավ Գորելովկա գյուղը: Նրա համար հիշարժան տարեթիվ էր 1993 թվականը, երբ նշանակվեց Գորելովկայի նորաբաց ոչ լրիվ հայկական միջնակարգ դպրոցի տնօրեն:

Շուտով, մեկ տարի անց, կրթօջախը վերածվեց միջնակարգի, 150 աշակերտներով: Նորանշանակ տնօրենը առաջին հերթին հոգ տարավ դպրոցական շենքի մասին: Նրա ակտիվության շնորհիվ, շուտով դպրոցն ունեցավ նոր շենք, 1998-ին դպրոցը տեղափոխվեց կոլտնտեսությանը պատկանող հին շենքը, որը նույնպես տնօրենի նախաձեռնությամբ հիմնովին նորոգվեց ու բարեկարգվեց, ստեղծելով նորմալ պայմաններ դասերի անցկացման համար:

2002 թվականին նոր տեղաշարժ էր սպասվում Սեյրան Կյուրեղյանի համար՝ ընտրվում է Նինոծմինդայի տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ, ուր աշխատում է մինչեւ օրս: Նրա ջանքերով ընտրական համակարգը շրջանում գնալով կատարելագործվում է, տեղական ընտրական տեղամասերում առաջ են քաշվում ավելի կարող ուժեր, հանձնաժողովների անդամները անցնում են դասընթացներ, բարձրացնում իրենց որակավորումը: Նինոծմինդայի թիվ 41 ընտրատարածքը այժմ էլ երկրում համարվում է ամենաօրինակելիներից մեկը:

Սեյրան Կյուրեղյանը, բացի իր հիմնական աշխատանքից, զբաղվում է ֆերմերային աշխատանքով, առավելապես՝ կաթի ու կաթնամթերքների արտադրությամբ: Ամեն տարի տասնյակ տոննաներով պանիր է առաքում սպառողներին, առավելապես քաղաքամայր Թբիլիսի:

Իր կյանքի ճանապարհին Սեյրան Կյուրեղյանը ամուսնացավ համագյուղացի օրիորդի՝ Մարգարիտայի հետ, կազմեց ընտանիք: Նրանց հարկի տակ ծնվեց 4 զավակ՝ մեկ տղա եւ երեք աղջիկ, որոնք բոլորն էլ ստացել են բարձրագույն կրթություն, կազմել ընտանիք եւ աշխատում են տարբեր բնագավառներում: Որդին՝ Սմբատը, զբաղեցնում է պատասխանատու պաշտոն՝ շրջանային ժողովի նախագահն է, Լեյլին՝ Գորելովկայի դպրոցի ուսմասվարն է, մյուս դուստրերը՝ Հասմիկն ու Գայանեն, նույնպես մանկավարժներ են: Վերջերս Գայանեն համակարգիչով քննություն հանձնեց եւ ստացավ ավագ ուսուցչի կոչում: Սեյրան Կյուրեղյանի հարսը՝ Սմբատի կինը՝ Սաթենիկը, նույնպես բարձրագույն կրթությամբ մանկավարժ է, Գորելովկայի հայկական դպրոցի տնօրենն է:

Սեյրան եւ Մարգարիտ Կյուրեղյանները ունեն 11 թոռ, նրանցից 9-ը նույնպես ստացել են բարձրագույն կրթություն, 4-ը սովորում են բժշկական ինստիտուտում:

Ահա այսպես բազմանում ու ընձյուղվում է Սեյրան Կյուրեղյանի տոհմը:

Շնորհավոր ծնունդդ, քեզ տոկունություն ու քաջառողջություն:

*ՄԱՆՈՒԿ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ*

*Նինոծմինդա*

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԵԹԵ ՄԵՆՔ ՉՍՈՎՈՐԵՆՔ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՊՐԵԼ ԲՆԱԿԱՆՈՆ ԿՅԱՆՔՈՎ, ՄԵՆՔ ԿՈԼԱՊՍ ԵՆՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ»



*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հորդորեց սովորել կորոնավիրուսի պայմաններում ապրել բնականոն կյանքով: «Ֆեյսբուք»-ի իր էջի ուղիղ եթերում նա նշեց, որ կորոնավիրուսային ճգնաժամը կարող է երկար շարունակվել:*

- Հիմա ով կարող է ասել՝ այս արտակարգ դրությունը կամ այս արտակարգ դրության ռեժիմն ինչքան կարող է տեւել: Մեր հաշվարկները ցույց են տալիս, որ մինչեւ մյուս տարվա մարտ մենք այս կորոնավիրուսային ճգնաժամի մեջ ենք լինելու: Բոլորդ արդեն պատրաստվեք, որ մինչեւ հաջորդ մարտը կորոնավիրուսը լինելու է: Եթե մենք չսովորենք կորոնավիրուսի պայմաններում ապրել բնականոն կյանքով, կոմունալները վճարելով, մենք կոլապս ենք ունենալու,- ասաց Նիկոլ Փաշինյանը եւ հավելեց, որ քայլ առ քայլ պետք է վերադառնալ բնականոն կյանքով ապրելուն:

Ավելի վաղ Նիկոլ Փաշինյանը նշել էր, որ, առաջիկա 10 օրվա ընթացքում, պարետատունը գնալու է սահմանափակումների նվազեցման:

## ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Հայաստանի կառավարության հակաճգնաժամային միջոցառումների շրջանակում՝ արդեն բաշխվել է շուրջ 54,9 միլիարդ դրամ:*



Այդ մասին կառավարության նիստում հայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ ավելացնելով, որ շահառու տնտեսավարողների թիվը, ովքեր օգտվել են հակաճգնաժամային միջոցառումներից, 22 հազար է, շահառու ֆիզիկական անձանց թիվը կազմում է շուրջ 775 հազար մարդ:

- Այսինքն՝ 775 հազար մարդ, այս պահի դրությամբ, օգտվել է մեր հակաճգնաժամային միջոցառումներից որեւէ մեկից,- ասաց վարչապետը:

Նիստում նշվեց, որ կառավարության կողմից ձեռնարկվող միջոցառումներում ներգրավվածների թվում են նաեւ ուսանողները:

Խոսելով ուսանողներին օգնելու մասին՝ Նիկոլ Փաշինյանն ասաց, որ իրենք առանց բացառության օգնում են բոլոր ուսանողներին:

- Այն տարբերությամբ, որ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների համար այդ աջակցությունն ավելի շոշափելի է, իսկ ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների համար պակաս շոշափելի է, - ասաց վարչապետը:

## ԿՈՄՈՒՆԱԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ ԵՆ

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ կառավարությունում շարունակվում են կորոնավիրուսի հետեւանքների չեզոքացման ծրագրերի շուրջ քննարկումները:*

Քննարկման արդյունքներով՝ վարչապետ Փաշինյանը հանձնարարել է էլեկտրաէներգիայի, գազի եւ ջրի վարձավճարների հետ կապված օժանդակության միջոցառումներն ընդլայնել եւ ներկայացնել կառավարության համապատասխան որոշման նախագիծ:

Կորոնավիրուսի տնտեսական հետեւանքների չեզոքացման միջոցառման համաձայն՝ փետրվար ամսվա գազի եւ էլեկտրաէներգիայի կոմունալ վճարները մասամբ կփոխհատուցվեն պետության կողմից: Միջոցառման շահառու են բնական գազի մատակարարման եւ էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագիր կնքած այն բնակիչ բաժանորդները, որոնց 2020 թվականի փետրվար ամսվա ծախսը կազմել է՝ բնական գազի սպառման գծով 10 001-30 000 դրամ, էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ 5001-10000 դրամ: Աջակցությունը տրամադրվում է 30 տոկոսի չափով:

Ավելացնենք, որ Նիկոլ Փաշինյանը, քաղաքացիների հետ հեռախոսազրույցի ընթացքում, խոստացավ վճարել մեկ ընտանիքի սպառած էլեկտրաէներգիայի 50 հազար դրամ պարտքը:

Ընտանիքն ուներ սոցիալական որոշակի խնդիրներ, ընտանիքի անդամներից ոմանք նաեւ՝ առողջական խնդիրներ: Տան հոսանքն անջատված էր վճարումը չկատարելու պատճառով:

- Կասեմ իմ ֆոնդից ձեր հոսանքի գումարը կտան, այս ամսվա 50 հազար դրամը կփոխանցեն,- ասաց Փաշինյանը:

## ՇՈՒՏՈՎ ԿԳՈՐԾԵՆ ԲԱՑՕԹՅԱ ՌԵՍՏՈՐԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՐՃԱՐԱՆՆԵՐԸ

*Հայաստանի կառավարության որոշմամբ, մայիսի 4-ից կվերացվեն քաղաքացիների տեղաշարժն ու տնտեսական գործունեությանը վերաբերող մի շարք սահմանափակումներ՝ ազատ տեղաշարժի սահմանափակումները կհանվեն, բայց միեւնույն ժամանակ կորոնավիրուսի համավարակի տարածման ռիսկի պատճառով հանրային տրանսպորտը չի գործի:*

Մայիսի 4-ից կվերացվեն նաեւ մշակող արդյունաբերության հետ կապված սահմանափակումները, կվերսկսեն աշխատանքները տեքստիլ, կահույք, կոշիկ արտադրող ընկերությունները, պոլիգրաֆիական եւ այլ ենթաոլորտներ:

Ինչ վերաբերում է հանրային սննդի կազմակերպմանը, ապա, կգործեն միայն այն սրճարանները, ռեստորաններն ու բարերը, որոնք կունենան բացօթյա տարածք, այսինքն՝ դրանց գործունեությունն ու հաճախորդներին սպասարկումը կթույլատրվի միայն բացօթյա տարածքում. փակ տարածքում սպասարկում չի իրականացվելու:

Վերաբացվում են նաեւ բուսաբանական, կենդանաբանական այգիները, արգելոցները եւ այլն:

Սպորտային օբյեկտների գործունեությունը բացառապես կթույլատրվի պրոֆեսիոնալ մարզիկների մասնակցությամբ՝ սպորտային միջոցառումների համար: Կվերաբացվեն նաեւ գեղեցկության սրահները, լվացման, մաքրման ծառայությունները:

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ

### ՉԵՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



*Հայաստանի կրթության նախարար Արայիկ Հարությունյանի հայտարարությամբ՝ Հայաստանում չեղյալ են հայտարարվել դպրոցական ավարտական քննությունները:*

- Դպրոցներում ավարտական 12-րդ դասարանի քննությունները չեն իրականացվելու: Բոլոր առարկաների տարեվերջյան գնահատականները կամփոփվեն առաջին կիսամյակի ամփոփիչ եւ երկրորդ կիսամյակի էլեկտրոնային գնահատականների հիման վրա: Հաշվի առնելով, որ 12-րդ դասարանի որոշ աշակերտներ ավարտական քննությունները հանձնել են նախորդ տարվա դեկտեմբերին, նրանց հնարավորություն է տրվում ընտրելու՝ պահպանել քննական արդյունքը կամ ընտրել տարեվերջի գնահատականը՝ որպես ատեստատում քննական գնահատական,- ասաց նախարարը: Ամփոփումը կկատարվի, եւ ատեստատները կհանձնվեն մինչեւ մայիսի 25-ը: Քոլեջների եւ ուսումնարանների ավարտական դիպլոմային աշխատանքների պաշտպանություն եւ քննություն չեն իրականացվելու: Ամփոփումն իրականացվելու է նույն սկզբունքով, ինչ դպրոցական ավարտականների դեպքում: Այս ուսումնական հաստատություններում ավարտական դիպլոմները կստանան մինչեւ հունիսի 5-ը,- նշեց Արայիկ Հարությունյանը:

Ըստ նրա, կառավարության որոշմամբ, ուսումնական տարին Հայաստանում կավարտվի հեռակա կարգով:

Քննությունները չեն անցկացվի նաեւ 10-րդ եւ 11-րդ դասարաններում:

Հայաստանում աշակերտները ատեստատները կստանան մայիսի 25-ին:

### ԱՎԵԼԱՆՈՒՄ Է ԻՆՉՊԵՍ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ, ԱՅՆՊԵՍ ԷԼ՝ ԱՌՈՂՋԱՑԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ

***Մայիսի 1-ի դրությամբ՝ Հայաստանում հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության ընդհանուր 2148 դեպք, որոնցից 977-ն՝ առողջացած: Կորոնավիրուսային հիվանդությամբ այս պահին փաստացի բուժում է ստանում 1136 բուժառու: Ընդհանուր առմամբ, կատարվել է 22 177 թեստավորում: Այսպիսով՝ կա կորոնավիրուսային հիվանդությամբ հաստատված 82 նոր դեպք եւ 48 առողջացած:***

***Ընդհանուր առմամբ՝ կորոնավիրուսային հիվանդությունից արձանագրվել է մահվան 33 (ավելացել է եւս 1-ով) դեպք:***

***Հայաստանի առողջապահության նախարարությունից հայտնում են, որ մահացած իգական սեռի բուժառուն եղել է 27 տարեկան եւ ունեցել է ուղեկցող քրոնիկ հիվանդություններ:***

***Հիշեցնենք, որ Հայաստանի կառավարությունը, ապրիլի 14-ին կայացած արտահերթ նիստում, ընդունեց երկրում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ժամկետը 2020 թվականի ապրիլի 14-ից՝ 30 օրով՝ մինչեւ 2020 թվականի մայիսի 14-ը երկարաձգելու որոշում: Երկրում գործում է խիստ սահմանափակումների ռեժիմ:***

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԵՌԱՄՍՅԱ ՑՈՒՑԱՆԻՇՆ ԱՃԵԼ Է ՉՈՐՍ ՏՈԿՈՍՈՎ

***Հայաստանի ազգային վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալներով, տնտեսական ակտիվության ցուցանիշը, այս տարվա հունվար-մարտ ամիսներին, 4 տոկոսով աճել է 2019-ի նույն ժամանակահատվածի համեմատ:***

***Մասնավորապես արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 8.7 տոկոսով, գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը՝ 4.5 տոկոսով:***

### ԶՈՐԱԿՈՉԸ ԿՍԿՍՎԻ ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ

***Հայաստանի կառավարության որոշմամբ՝ 2020 թվականի մայիսի 1-ից մինչեւ օգոստոսի 30-ը ներառյալ, հայտարարվում է զորակոչ:***

***Ըստ որոշման՝ հայտարարվում է Հայաստանի արական սեռի այն քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական եւ այլընտրանքային ծառայությունների ամառային զորակոչը, որոնց 18 տարին լրանում է մինչեւ 2020 թվականի հունիսի 30-ը ներառյալ, ինչպես նաեւ՝ այն քաղաքացիների, որոնց շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նախկինում տրված տարկետումը դադարում է մինչեւ 2020 թվականի հուլիսի 31-ը ներառյալ:***

### ԳԱՎԱՌՈՒՄ ԲԱԽՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԶՈՀՎԵԼ Է ԵՐԿՈՒ, ՎԻՐԱՎՈՐՎԵԼ՝ ՄԻ ՔԱՆԻ ՄԱՐԴ

***Ապրիլի 30-ին, Հայաստանի Գավառ քաղաքում ոստիկանությունը ձերբակալել է 15 մարդու: Ինչպես գրում է NEWS.am-ի լրատվական գործակալությունը, այդ մասին հայտնել է քննչական կոմիտեի մամլո ծառայությունը:***

***Ըստ տեղական ԶԼՄ-ների՝ մի քանի մարդ ապրիլի 28-ին կրակ է բացել Գավառ քաղաքում, որի հետեւանքով զոհվել է երկու, վիրավորվել՝ մի քանի մարդ: Մի քանի ժամ անց տեղի հիվանդանոցի վրա մի խումբ քաղաքացիներ հարձակվեցին:***

***Հարձակվողները ջարդել են հիվանդանոցի պատուհանները, վնասել գույքը եւ՝ փորձել սպանել բուժառուներից մեկին: Տղամարդը ստացել է մարմնի վնասվածքներ:***

***Ինչպես պարզվել է՝ հիվանդանոցի վրա հարձակվողներից երկուսը՝ կրակոցների ժամանակ սպանվածների բարեկամներն էին:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՄԱՅԻՍ



*3.05.2020 Կարմիր կիրակի*

Հայաստանյայց Առաքելական եկեղեցու տոնացույցում Սուրբ Զատիկին հաջորդող կիրակիները հատուկ խորհրդանշական անվանումներ ունեն: Զատկի չորրորդ կիրակին կոչվում է՝ Կարմիր: Կարմիրը Քրիստոսի եկեղեցու եւ հավատի համար մարտիրոսացած նահատակների սուրբ արյան խորհրդանիշն է:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

## Magticom. «ԽՈՒՍԱՓԵՔ ԱՆԾԱՆՈԹ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԻՆ ԶԱՆԳԱՀԱՐԵԼՈՒՑ»

*«Մագթիկոմ» ընկերությունը տեղեկատվություն է տարածում սպառողների համար:*

Ընկերության ֆեյսբուքյան էջում տեղադրած տեղեկության համաձայն, MagtiCom-ի բաժանորդների հեռախոսներին գրանցվում է միջազգային համարներից բաց թողնված զանգեր, որոնք մեկնարկում են՝ 338, 3246, 3490, 3705, 3712, 4367 համարներով:

«Համարները միջազգային են եւ զանգահարելու դեպքում հեռախոսի հաշվից տրվում է գումար:

Այս ուղղություններն արդեն արգելափակված են, բայց խորհուրդ ենք տալիս, որ եթե արտասահմանից զանգ չեք ակնկալում, խուսափեք անծանոթ համարանիշ զանգահարելուց, որպեսզի չտուժվեք», - հայտարարել են «Մագթիկոմում»:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

## ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ ԿՎԵՐԱԿԱՆԳՆՎԻ, ՍԱԿԱՅՆ ԴՐԱՆՈՒՄ ԿԼԻՆԵՆ ՀԱՏՈՒԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ



*Ինչպես արդեն հաղորդել ենք, արտակարգ դրության շրջանակներում, Վրաստանի կառավարության որոշմամբ, երկրի խոշոր քաղաքներում, մասնավորապես, Թբիլիսիում, հանրային տրանսպորտի (այդ թվում՝ մետրոպոլիտենի) երթեւեկությունն արգելվեց: Արտակարգ դրությամբ նախատեսված սահմանափակումների մեղմացման շրջանակներում, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն հայտարարեց, որ կառավարական ծրագրում, սահմանափակումների դադարեցման 6 փուլերից որեւէ մեկում, հանրային տրանսպորտի վերականգնման հետ կապված կետ չկա:*

- Տրանսպորտի սահմանափակումների դադարեցումը չի վերաբերում մետրոյին, ավտոբուսներին եւ երթուղային տաքսիներին: Հասարակական տրանսպորտի աշխատանքի վերականգնումն ուղղակիորեն կապված է երկրում վարակով պայմանավորված իրավիճակի հետ: Պետք է զգուշանանք, մենք այս պայքարում դեռեւս չենք հաղթել, պայքարը շարունակվում է,- հայտարարեց Կախա-Կալաձեն եւ հավելեց, որ հասարակական տրանսպորտի երթեւեկությունը կվերականգնվի միայն ոլորտի մասնագետների խորհրդատվություններից հետո:

- Հասարակական տրանսպորտում պետք է լինեն աշխատակիցներ, որոնք քաղաքացիներին ցուցումներ կտան, թե ինչ անել՝ կորոնավիրուսով վարակվելուց խուսափելու համար, թեեւ հասարակության զգոնությունն այս հարցում եւս կարեւոր է,- հայտարարեց Կախա Կալաձեն:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ Է ԳՈՐԾՈՒՄ

## ԵՎՐԱՏԵՍԻԼԻ ՓՈԽԱՐԵՆ՝ ՆՈՐ «Europe! Shine A Light» ՇՈՈՒ




*Ընթացիկ տարվա մայիսի 12-ին Նիդերլանդների Ռոտերդամում անցկացվելիք Եվրատեսիլի չեղարկման պատճառով՝ Եվրոպայի հեռարձակողների միությունը (EBU) մայիսի 16-ին հեռուստադիտողին կառաջարկի նոր շոու՝ «Europe! Shine A Light» անվանմամբ:*

Շոուն ուղիղ եթեր կհեռարձակի 46 հեռուստաընկերություն, այդ թվում՝ Վրաստանի Առաջին ալիքը:

Վրաստանի Առաջին ալիքով ուղիղ հեռարձակումը կիրականացվի մայիսի 16-ին, 23:00-ից: Շոուին կմասնակցի 41 երկրի պատվիրակ, ովքեր պետք է հանդես գային 2020 թվականի Եվրատեսիլին, այդ թվում՝ Թոռնիկե Ղիփիանին՝ Վրաստանից եւ Աթենա Մանուկյանը՝ Հայաստանից: Նոր շոուին կմասնակցեն նաեւ Եվրափառատոնի նախորդ տարիների հաղթողները:

Կազմակերպիչների խոսքով, դա կլինի անմոռանալի շոու, որը ուղիղ եթերով կհեռարձակվի Նիդերլանդների հեռուստատեսային տաղավարից, եւ այն կհյուրընկալեն Chantal Janzen, Edsilia Rombley-ն եւ Jan Smit-ը:

Շոուի կազմակերպիչների հայտարարությամբ, դրա միջոցով պատշաճ կերպով հարգանքի տուրք կմատուցեն կորոնավիրուսից տուժածներին:

## ՖՈՒՏԲՈԼ. ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ ՀԵՏԱՁԳՎՈՒՄ ԵՆ




*Ֆուտբոլի Ազգերի լիգայի որակավորման փուլի խաղերը կարող են սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին չմեկնարկել:*

Որակավորման փուլի խաղերը կարող են հետաձգվել՝ կորոնավիրուսի պանդեմիայի պատճառով: Միջազգային կառույցները քննարկում են՝ հետաձգելուց հետո խաղերն անցկացնելու երկու տարբերակ: Առաջին դեպքում խաղերը կարող են անցկացվել նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, եւ ամեն երկրում հնարավոր է կայանա մինչեւ 6 հանդիպում: Երկրորդ տարբերակով քննարկվում է՝ նոյեմբեր ամսին, բացի հիմնական խաղերի օրերից, եւս մի քանի «բաց» օրեր ունենալ:

Դեռեւս մարտի 3-ին Նիդերլանդների Ամստերդամ քաղաքում կայացել էր Ազգերի լիգայի 2020/21 մրցաշրջանի խմբային փուլի վիճակահանությունը: Վրաստանի եւ Հայաստանի հավաքականներն ընդգրկվել էին C ենթախմբի երկրորդ խմբում եւ նրանց մրցակիցներն են Հյուսիսային Մակեդոնիայի եւ Էստոնիայի թիմերը:



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Առնետ: 9.Լացող ծառ: 10.Կղզի Վանա լճում: 11.Շախավետ: 13.ՌԴ առաջին նախագահը: 16.Ֆրանսիացի ֆուտբոլիստ Գաբրիել ...: 17.Փոքր արկղ: 19.Առանց լռելու: 22.Հուզումնալից: 24.Կոճգամ: 25.Ամուսնության բյուրո: 27.Հայ ռեժիսոր, սցենարիստ ... Աղաբաբով: 29.Վրաստանի խորհրդարանի պատգամավոր ... Մկոյան: 32.Անալի: 33.Օրգանական նյութ, անգույն բյուրեղներ: 35.Խածել, խայթել (բրբ.): 38.Անկյանք, անկենդան: 40.Վրաց դերասանուհի ... Ռեխվիաշվիլի: 41.Թունավոր, խոշոր օձ: 44.Օգտակար հանածոների «բնական պահեստ»: 47.Այժմ (ժող.): 48.Բոց: 50.Իտալացի օպերային երգչուհի Ջուդիտա ...: 51.Հայկական ծագումով ամերիկյան հայտնի երգչուհի: 52.Որովհետեւ, որպեսզի: 53.Գետ Չինաստանում եւ Ղազախստանում: 54.Պորտուգալացի ֆուտբոլիստ ... Կոշտա: 55.Ֆրանսիացի գեղանկարիչ, գրաֆիկ եւ քանդակագործ Էդգար ...:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Լնդախտ: 2.Քաղաք Չինաստանում: 3.XIII դարից սկսած վենետիկյան ոսկեդրամ, որը հետագայում տարածվել է ամբողջ Արեւմտյան Եվրոպայում: 4.Թերեւս, հավանաբար: 5.Գերմանացի գրող Զիգֆրիդ ...: 6.«Առյուծ» քաղաք Ֆրանսիայում: 8.Կարճ ու կոնկրետ, վճռական: 12.Ծաղրական նմանակում: 14.Իտալացի կինոդերասան ... Վենտուրա: 15.Իշու ձագ, քուռակ: 18.Շչակի ձայն արձակել: 19.Հայկական ստորգետնյա թագավորության աստված: 20.Երեսին դեռ մազ չբուսած, անմազ-անմորուք: 21.Կուբացի շախմատիստ Խոսե ... Կապաբլանկա: 23.Վրացի կինոռեժիսոր ... Շվելիձե: 26.Սեղանի սպասքի առարկա: 28.Ուրարտուի թագավոր: 29.Չինական կայսերական դինաստիա (մ.թ.ա. 221-մ.թ.ա. 207): 30.Վրացի ռեժիսոր եւ կոմպոզիտոր ... Մաչաիձե: 31.Սուգ, ողբ: 34.Գիտենալ: 36.Աշխատանք չսիրող, անբան: 37.Մերձբալթյան պետություն: 39.Չինամթերք: 42.Տարվա չորս եղանակներից: 43.Հարսանիքում՝ ազապ-...: 45.Մեծ եղբայր, հայր: 46.Հունական այբուբենի տառ: 48.Այժմ, ներկայումս: 49.Էթնոս, ժողովուրդ, ցեղ:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1. Մարթա: 4.Սարկավագ: 9.Դու: 10.Ան: 11.Քաթան: 12.Դուբայ: 13.Իրմա: 14.Ում: 15.Նամուս: 16.Նովենց: 18.Թե: 19.Դիլա: 20.Իորի: 23.Արդի: 24.Անապատ: 27.Վիրք: 29.Գունո: 30.Վալս: 32.Արար: 33.Սոխ: 34.Ազատ: 35.Վանո: 36.Երմակ: 37.Իմաստ: 40.Այրի: 42.Քեզ: 43.Տաշքենդ: 45.Ստան: 47.Երասխ: 48.Բելլա: 49.Արիել: 50.Զարթոնք:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Ախթամար: 3.Թենիս: 4.Սուդան: 5.Րաբունի: 6.Կնամոլ: 7.Անտունի: 8.Աքանլի: 17.Վարագավանք: 18.Թերի: 21.Շիրազ: 22.Ստորոտ: 24.Ավստրիա: 25.Պուրակ: 26.Անան: 27.Վերջին: 28.Քեոփս: 30.Վարազդատ: 31.Լաերտ: 38. Աստղիկ: 39.Տքնել: 41.Անելիք: 44.Շաբաթ: 46.Բալ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» հրատարակչություն
“ВРАСТАН” Тбилиси, Грузия <VRASTAN> Georgia, Tbilisi Индекс 66445